Հովհաննես Չեքիջյան

Երաժշտագետ, խմբավար, ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր: ՀԽՍՀ, ԽՍՀՄ պետական մրցանակակիր, ԽՍՀՄ ԳԽ պատգամավոր (1979-1984), Հայկական ԽՍՀ 9, 10, 11-րդ գումարումների ԳԽ պատգամավոր (1975-1990թթ.):

Պարգևատրվել է <<Աշխատանքային Կարմիր դրոշ>>, <<Ժողովուրդների բարեկամություն>>, <<Մովսես Խորենացի>>, <<Սբ. Սահակ - Սբ. Մեսրոպ>>, <<Մեսրոպ Մաշտոց>>, <<Մխիթար Սեբաստացի>> շքանշաններով և մեդալներով, ինչպես նաև Մխիթարյան միաբանության ոսկե մեդալով, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով, ՀՀ ԿԳՆ ոսկե հուշամեդալով և ՀՀ ԳԱԱ հուշամեդալով:

Ծնվել է 1929թ. Ստամբուլում:

Երաժշտական կրթությունն ստացել է Ստամբուլի կոնսերվատորիայում (1951թ.):

1951-54թթ. Փարիզում սովորել է քիմիական ինստիտուտում, ստացել ինժեներ-քիմիկոսի որակավորում, զուգահեռաբար Փարիզի <<Ecole normale de Musique>> կոնսերվատորիայում աշակերտել է Փարիզի օպերային թատրոնի գլխավոր դիրիժոր Ժան Ֆուրնեին:

1958թ. ընդունվել է Ստամբուլի կոնսերվատորիայի ասպիրանտուրան: Ղեկավարել է նույն թվականին հիմնադրված Ստամբուլի պետական օպերային թատրոնի երաժշտական մասը, իսկ 1960թ. նշանակվել Ստամբուլի պետական կապելլայի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր:

1961-ին տեղափոխվելով Հայաստան՝ ստանձնել է Հայաստանի պետական երգչախմբի գեղարվեստական ղեկավարի և գլխավոր դիրիժորի պաշտոնը:

1975թ.-ից դասավանդել է Երևանի պետական կոնսերվատորիայում:

1982-87թթ. եղել է Երևանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրենը և գեղարվեստական ղեկավարը:

Հայաստանի պետական երգչախումբը 1969թ. ԽՍՀՄ կուլտուրայի մինիստրության հրամանագրով արժանացել է <<Ակադեմիական>> բարձր կոչմանը, իսկ 1975թ. դարձել Հայաստանի վաստակավոր կոլեկտիվ: Երգչախումբն ավելի քան 800 համերգով հանդես է եկել աշխարհի մոտ 180 քաղաքներում՝ ներկայացնելով հագեցած երգացանկ: Շնորհիվ Հ. Չեքիջյանի՝ կապելլան միակն է համաշխարհային խմբերգային արվեստում, որը նոտաներից չի օգտվում անգամ խոշոր կտավի վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործություններ կատարելու ժամանակ: